Հայերը, փոշիների միջից, ֆէսերը դուրս են հանել:

* * *

Ստամբուլը, ցորեկը խորհրդաւոր լռութիւն է պահում, գիշերը աղմկում է:

Պերայի սրճարանների պատերի տակ երկիւղը քարշ է գալիս:

Պոռնիկները փսխում են իրենց քաղաքական համոզումները:

Լրագիրների խմբագիրները պատրաստում են իրենց փախուստը, վերջին սպառնալից առաջնորդողներ գրելով:

Հայաստանի կառավարութիւնը Արարատի կատարին ֆէս է տնկել: Հայոց պատրիարքը, սենեակի մէջ անհանգիստ ման է գալիս եւ իր համրիչները կրծում:

Փողոցներում խումբ խումբ մարդիկ շուարած երկինք են նայում: Խանութպանները չընչին գնով ապրանքներ են ծախում: Ամէն ինչ վաղում է կամ սողոսկում:

Տներից ներս, սրտերը պատերին են զարնում եւ ջղայնացած ձեռքեր սնտուկների խորքից արծաթէ դգալների եւ մաշուած թղթադրամների կապոցներ պատրաստում:

Արջի թաթը զարնուել է դպրոցների վեթակին: Աշակերտները երկրաչափական գրքերի մէջ անյայտ կէտեր են որոնում, իսկ աշակերտուհիները ստամոքսի ցաւ են զգում:

Պէյլերի պարտէզում օպերետային խումբը, սրտի խորքից, ճակատագրի ճիրաններին ծիծաղ է մատուցում: Տեսարանը չվերջացած, հեռուից թուրք ամբոխի մօտեցող ոռնոցն է լսւում: Ժողովուրդը փախչում է. իսկ դերասանները, հեռաւոր փողոցների անկիւններում կուչ եկած, խաւարին իրենց պատռած սիրտն են երկարում:

Գիշերը, ամէն ոք կոտորածի է սպասում:

Նստում ենք, ատրճանակները սեղանի վրայ շարած: Ականջը ռադիօի բարձրախօսի նման ամէն ինչ մեծցնում է: Շշուկները հաստատուն ոտնաքայլի հանդամանք են առնում: Խաւարը ման է գալիս:

Լուսարացին արեւը նայում է դեղնած դէմքերին: Առայժմ ամէն մարդ ողջ է:

Դեսպանատուների առջեւ, անցագրերը հեռաւոր երկիրների դռներն են զարնում: Կորոնթոսը բաց է, Մարիցան փշրել է իր կամուրջը, Պուանկարէն հաշւում է գերմանացիների փողերը:

Սուլթանը վատ նախազգացումներ ունի՝ հաշիշ է առնում եւ դաղտնի բանակցութիւններ վարում: Զինուած մարդիկ Դարդանելից անցնում են Թրակիա եւ, արեւելեան ճեպընթացի ուշացման պատճառով, Թօքաթլեանի Փարիզում ապսպրած անուշը հոտել է:

Վոսֆորի առջեւ նաւերը դեռ կանգ են առնում, բայց Սեւ ծով վախում են անցնել:

Պոլիսը չի ընդունում դաղթականներին:

Մարդկային էակներով եւ իրեղէններով լեցուած առաղաստանաւերը մուրացկանների նման կանգ են առնում դանդան երկիրների ափերին եւ անիծելով հեռանում:

Թուրք ամբոխը, այլեւս կատաղած, Պերայի փողոցներում ցոյցեր է անում, պատուհաններ եւ մարդ ջարդում:

Սկովտիացիները, միշտ մերկ գիստերով, զօրանցք են անում, յուղարկաւորական նայուածքների առջեւ:

Խորհրդային Հայաստանի դրասենեակը սովետական դրօշ է բարձրացրել: Խաւեարի գինը ընկել է:

Պատրիարքարանը դիմումներ է անում՝ սակարկում են, թէպէտ բոլոսան վաղուց փակուել է: Անգլիական դեսպանատան առաջին քարտուղարը առանձնացել է պատրիարքի հետ եօթը եւ կէս բոպէ: Թերթերը յոյս են առել:

Ազգային իշխանութիւնները տակն ու վրայ են՝ չվճարած տուրքերն են պահանջում եւ անցագրի դրամ:

Սկիւտարցիները իջել են եւրոպական ափը: Եղիա Տէմիրճիպաշեանի կախուած գլուխը սարսափով նայում է ամայացած գիւղին:

Նաւերի սուլոցը տունները ցնցում է:

Վոսֆորի մակոյկների վրայ սրտեր են օրօրւում:

Մարդիկ թաւալւում են դէպի Գալաթա եւ շուարած յետ փախչում: Կայարանը մզկիթի է վերածուել՝ ամէն մարդ աղօթում է:

Հաղարաւոր քարտէսների վրայ մտահոգ աչքեր պատսպարուելու վայր են փնտռում: Նաւային ընկերութիւնները ուրախ են եւ նաւաստիները փոքրիկ առեւտուր են անում:

Գնում եմ Հայաստան:

(Շարունակելի)

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան